

ՓՈՇՈՐԻԿ ԿՈԿԿԱՍՍՈՒՆ

Под редакцией Руслана Пухова

БУРЯ НА КАВКАЗЕ

Ռուսլան Պուխովի խմբագրությամբ

ՓՈԹՈՐԻԿ ԿՈՎԿԱՍՈՒՄ

12 քաղաքագետ՝ արցախյան 44-օրյա պատերազմի
պատճառների ու հետևանքների մասին

Թարգմանությունը ռուսերենից՝
Կարեն Հարությունյանի



ԵՐԵՎԱՆ
2022

ՀՏԴ 327:355
ԳՄԴ 66.4+68.0
Փ 765

Փ 765 Փոթորիկ Կովկասում / Ռուսլան Պուխովի խմբագրությամբ.-
Եր.: Newmag, 2022.- 264 էջ:

Գիրքը նվիրված է 44-օրյա պատերազմին (2020թ. սեպտեմբեր-նոյեմբեր): Աշխատությունը քննում է հայ-ադրբեջանական զինված հակամարտության հիմնական պատճառները, ընթացքը և հետևանքները՝ ներգրավված բոլոր կողմերի համար: Հետազոտության հեղինակները վերլուծում են ռազմական և ռազմատեխնիկական այն ասպեկտները, որոնք ազդել են պատերազմի ելքի վրա: Քննության նյութ են Հարավային Կովկասի առանցքային խաղացողների, նաև Ռուսաստանի ու Թուրքիայի քաղաքական բարդ հարաբերությունները:

Այսօր պետությունները հայտնվել են դանդաղ հոսանքում՝ ծանր հարվածների ու նոր նավաբեկությունների վտանգի ճիշտ մեջտեղում: Ղարաբաղում պատերազմն այդպիսի նավաբեկություն էր, որը բոլորի համար փոխեց ամեն ինչ, առաջին հերթին բախումների ուղիղ մասնակիցների՝ Արցախի, Հայաստանի և Ադրբեջանի համար: Իսկ Վաշինգտոնի և Փարիզի համար որքանով էին կարևոր պատերազմի օրերին տապալված իրենց միջնորդական ջանքերը: Ռուսաստանի համար ի՞նչ է նշանակում միջնորդական դերը չկորցնելը, երբ կորսված է ավելին: Պատերազմի ելք ցամաքում, որը կանխորոշված էր օդում: Ադրբեջանի ղեկավարության որոշումները գրքում բացատրվում են մարտադաշտից ռազմական հետհայացքով և քաղաքագիտական արժեքավոր վերլուծությամբ: Առանձին անդրադարձ կա Հայաստանի ղեկավարության քայլերին, որոնք չկատարվեցին, և որոնց վերաբերող հարցերը դեռ հնչում են:

ՀՏԴ 327:355
ԳՄԴ 66.4+68.0

ISBN 978-9939-884-65-3

Под редакцией Руслана Пухова «Буря на Кавказе» © ООО «Центр анализа стратегий и технологий
Ռուսլան Պուխովի խմբագրությամբ «Փոթորիկ Կովկասում» © 2022, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության բոլոր իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին:

Այս գրքի հրատարակման բոլոր իրավունքները պատկանում են «Օրակույ» և «Նյումեգ» ընկերություններին: Համաձայն կնքված պայմանագրի՝ «Օրակույ» հրատարակչության գրքերը ներկայացված են որպես «Նյու Մեգ» ընկերության «Օրակույ» հայ-ռուսական մատենաշար: Գրքի հայերեն թարգմանության և հրատարակման իրավունքները ձեռք են բերվել հեղինակի հետ կնքած պայմանագրով:

Գրքի գլխավոր գործընկեր

T U F E N K I A N

F O U N D A T I O N

tufenkian.org

Բովանդակություն

«Փոթորիկ Կովկասում» գրքի հայերեն հրատարակության շուրջ	9
Թարգմանչի նոթեր	11
Առաջաբան	13
Համաշխարհային պատերազմ՝ տեղական նշանակության	17
«Աշնանային պատերազմ». ոչ միանշանակ արդյունքներ կովկասյան տարածաշրջանի համար	57
Ռուսաստանը՝ Ղարաբաղյան երկրորդ պատերազմում գլխավոր պարտված կոհլմ	89
Ղարաբաղյան երկրորդ պատերազմի 44 օրերը	107
Ելք ցամաքում՝ կանխորոշված օդում	137
Օդն ընդդեմ օդի	
Ղարաբաղյան երկրորդ պատերազմում	161

Քառորդդարյա ճանապարհ դեպի ռևանշ	183
Ղարաբաղյան երկրորդ պատերազմը՝ Թուրքիայի արտաքին քաղաքական ռազմավարության արտացոլում	207
Ղարաբաղյան պատերազմների մենթալ աշխարհագրությունը	233
Վերջաբան. նոր փոթորկի սպասումով	251

«Փոթորիկ Կովկասում» գրքի հայերեն հրատարակության շուրջ

Ռազմավարությունների և տեխնոլոգիաների վերլուծությունների մոսկովյան կենտրոնի (ՌՏՎԿ) հրատարակած «Փոթորիկ Կովկասում» ռուսերեն ժողովածուն Հայաստանում առավելապես ընդունվեց զգացմունքային մակարդակով, բայց ոչ ռացիոնալ: Ի դեպ, 2018-ի գարնանը ՌՏՎԿ հրատարակած «Փոթորիկի սպասումով. Հարավային Կովկաս» ժողովածուն, որը հստակ ներկայացնում էր վերահաս ռիսկերն ու սպառնալիքները, նմանատիպ բարձր հուզականությամբ չընկալվեց, թեև ուղղակիորեն մատնանշում էր Մեծ Մերձավոր Արևելքի հետագա ուժային վերաձևման վեկտորը, դրա շահակիցներին ու կատարողներին, նախադրյալներն ու հետնապատկերը:

Հայաստանյան փորձագիտական հանրությանն այժմ ներկայացվում է «Փոթորիկ Կովկասում» ժողովածուի հայերեն թարգմանությունը:

Պատերազմի տարբեր կողմերն իրենց տեսանկյունից քննարկող և տարբեր երկրներ ներկայացնող փորձագետների հոդվածների ժողովածուն կազմել է ՌՏՎԿ տնօրեն Ռուսլան Պուխովը: Այս խճանկարը վերաճում է իրավիճակի ընդհանուր, բավական լայն պատկերի, որտեղ 44-օրյա պատերազմի բոլոր ուղղակի և անուղղակի մասնակիցները՝ բացառությամբ հայկական կողմի, օգուտ են քաղել բացված

«հնարավորությունների պատուհանից»: Այն պատուհանից, որը ստեղծել էր Հայաստանի քաղաքական ու ռազմական ղեկավարությունը:

Այս ժողովածուն միասնական կարծիք չէ, չի մատուցում փոխհամաձայնեցված, համապարփակ և բոլորին բավարարող եզրահանգումներ, հաղթանակի հասնելու բաղադրատոմսեր: Յուրաքանչյուր հեղինակ խոսում է իր անունից կամ իր երկրի շահերի տեսանկյունից:

*Պաշտպանական հեղազոտությունների
անկախ կենտրոն*

Թարգմանչի խոսք

«Փոթորիկ Կովկասում» ժողովածուն հայերեն թարգմանելիս փորձել ենք քաղաքագիտական, վերլուծական նյութը ներկայացնել պարզ լեզվով:

Հաշվի առնելով հոդվածների մասնագիտական բնույթը և ռազմական եզրույթների առատությունը՝ հայերեն տարբերակում (բացառությամբ մի քանի հանրահայտ հապավումների ու համառոտագրությունների) գործածել ենք բացված ձևերը, որպեսզի տեքստի ընթերցումը դյուրին լինի: Օրինակ՝ ԶՀՀ փոխարեն գործածել ենք ամբողջական բառակապակցությունը՝ «զենիթահրթիռային համալիր», ՀՄՄ փոխարեն՝ «հետևակի մարտական մեքենա», ՀԿՌՀ փոխարեն՝ «համազարկային կրակի ռեակտիվ համակարգ» ձևերը: Բացառություն են միայն ԱԹՍ (անօդաչու թռչող սարք) և ՀՕՊ (հակաօդային պաշտպանություն) եզրույթները, որոնք հայ հանրության համար արդեն իսկ միանգամայն հասկանալի միավորներ են:

Ժողովածուում տարբեր երկրների արտադրության բազմաթիվ զինատեսակների անուններ են թվարկվում՝ լատինատառ և ռուսատառ: Շփոթից խուսափելու համար բոլոր զինատեսակների անվանումները թողել ենք բնօրինակի լեզվով, օրինակ՝ Су-25, МиГ-29, Bayraktar TB2, F-16 և այլն:

Հոդվածներում կան եզրույթներ, որոնց հայ հանրությունը գուցե ծանոթ չէ, օրինակ՝ «թևածող զինամթերք» (барражирующий

боеприпас, loitering munition)՝ արկակիր անօդաչու թռչող սարքեր, որոնք հայտնի են նաև որպես «կամիկաձե դրոն»:

Հողվածներում հանդիպում են փաստական անձնություններ կամ բացեր, որոնք թարգմանությունում պահպանվել են նույնությամբ: Օրինակ՝ Անտոն Լավրովի հողվածում նշվում է 2020-ի նոյեմբերի 10-ին Մոսկվայում «Հայաստանի, Ադրբեյջանի և Ռուսաստանի արտաքին գործերի նախարարների դեմ առ դեմ բանակցությունների մասին», մինչդեռ մինչև այս պահը նման հանդիպման մասին որևէ տեղեկություն չկա: Փաստական մանր վրիպումներն ուղղել ենք, օրինակ՝ «Նախիջևանի անկլավ» ձևակերպումը թարգմանվել է «Նախիջևանի էքսկլավ» և այլն:

Հայ-ադրբեյջանական հակամարտության տասնամյակների ընթացքում ձևավորված միջազգային քաղաքական տերմինաբանության այն շերտը, որը հայ ընթերցողի համար խընդրահարույց է կամ սկզբունքորեն անընդունելի («ինքահռչակ ԼՂՀ», «Ադրբեյջանի օկուպացված տարածքներ», «Ադրբեյջանի տարածքային ամբողջականության վերականգնում» և այլն) պահպանել ենք վերլուծությունների հեղինակների ձևակերպումներով՝ լիովին ընկալելով, որ դրանք որևէ կերպ չեն արտահայտում հայաստանյան հրատարակչի դիրքորոշումը:

Ժողովածուի հայերեն թարգմանության մանրագնին խըմբագրման և ռազմագիտական եզրաբառերի ճշգրտման համար շնորհակալ ենք Պաշտպանական հետազոտությունների անկախ կենտրոնին:

Կարեն Հարությունյան

2018-ին Ռազմավարությունների և տեխնոլոգիաների վերլուծության կենտրոնը հրապարակեց «Փոթորկի սպասումով. Հարավային Կովկաս» հետազոտությունը՝ Լեռնային Ղարաբաղի շուրջ հակամարտության այն ժամանակվա վիճակի և սպասվող հեռանկարի վերաբերյալ:

Այդ հետազոտության շարունակությունն այժմ ընթերցողների դատին է ներկայանում «Փոթորկի Կովկասում» միջազգային թիմային աշխատանքի տեսքով՝ Ռազմավարությունների և տեխնոլոգիաների վերլուծության կենտրոնի տնօրեն Ռուսլան Պուխովի խմբագրությամբ:

Իմ կարծիքով՝ սա արհեստավարժ ևս մեկ աշխատանք է, որը հատկապես արդիական է այսօր՝ ռազմական գործի համաշխարհային զարգացման ներկա փուլում: Հիշեցնեմ՝ ցանկացած զինվորականի գլխավոր հարցի՝ «ինչպե՞ս հաղթել մարտում, ճակատամարտում, պատերազմում» պատասխանի որոնումը սկսվել է, երբ երևան է եկել ռազմական գործը՝ որպես գիտելիքների, կարողությունների և հմտությունների համակարգ՝ միավորված այժմ ընդունված «ռազմական արվեստ» և «ռազմական գիտություն» եզրույթներով:

Տարբեր ժամանակներում ռազմական տեսաբանները փորձել են կռահել ռազմական գործում հնարավոր փոփոխությունները, որոշել զինված պայքարում «անպարտելի

կոհորտաների»՝ Հին Հռոմում ռազմական գործի բարձրակարգ արհեստավարժությանը օժտված մասնագետների, այսպես կոչված, «ինտելիգենտների» կամ էլ «ցամաքային գրահակիրների»՝ տանկերի նախատիպերի տեղն ու դերը:

Իհարկե, ռազմական գիտությունը չի ընդունում վերացականություն, բայց առանց ստեղծագործ երևակայության հնարավոր չէ առաջ գնալ ո՛չ քաղաքականությունում, ո՛չ էլ ռազմական գործում: Եվ սա պետք է հաշվի առնել:

«Ռազմական գործը պարզ է և բավական հասանելի ողջախոհ մարդուն: Բայց պատերազմելը բարդ է», - Կարլ ֆոն Կլաուզևիցի այս բառերը վերը նշվածի հաստատումն են, և այս հետազոտության հեղինակներն առաջարկում են վերլուծել Լեռնային Ղարաբաղում 2020-ի «աշնանային պատերազմի» (որ կոչվում է նաև Ղարաբաղյան երկրորդ պատերազմ) պատճառները, ընթացքը և արդյունքները դրանում ուղղակի կամ անուղղակի ներգրավված բոլոր կողմերի համար:

Չեմ բացառում, որ այս հետազոտության բազմաթիվ գլուխներ, որոնք գրել է հեղինակների թիմը, այդ թվում՝ արտասահմանի, կառաջացնեն որոշ հարցեր և կդառնան բանավեճերի առարկա: Վստահ եմ, որ դա այս աշխատանքի նպատակներից մեկն է:

Այս գրքի վրա աշխատելիս հեղինակները կողմնորոշվել են ըստ հնարավոր լսարանի գործնական պահանջմունքների, ինչի հիմքում պետական և ռազմական կառավարման մարմիններն են, առաջին հերթին՝ պաշտպանության, արտաքին գործերի նախարարությունների և ուժային կառույցների աշխատակիցները, ընդ որում՝ ոչ միայն Ռուսաստանի Դաշնության:

Վստահ եմ, որ «Փոթորիկ Կովկասում» գիրքն օգտակար կլինի ռազմական փորձագետների, քաղաքագետների, լրագրողների՝ բոլոր նրանց համար, ովքեր մասնագիտորեն զբաղվում են ազգային և ռազմական անվտանգության խընդիրներով, ինչպես նաև՝ բարձրագույն ռազմական ուսումնական հաստատությունների կուրսանտների, բուհերի ուսանողների և ասպիրանտների համար:

Բանակի գեներալ Յուրի Բալուևսկի
ՌԴ ԶՈՒ Գլխավոր շտաբի պետ, 2004-2008 թթ.